# 2020 Մարդահամարի թվային իրազեկման ուղեցույց

## Գտնվելով տանը՝ հիշեցրեք ձեր ընկերներին և ընտանիքի անդամներին մասնակցել Մարդահամարին: Ահա ինչպես կարելի է իրազեկել մարդկանց






Գրանցվեք զանգեր կատարելու համար Mayor Eric Garcetti's-ի Մարդահամարի թիմի հետ bit.ly/censusphonebank կայքում:



Ներառեք Մարդահամարի վերաբերյալ տեղեկատվությունը ձեր հաջորդ տեսակոնֆերանսում, վեբինարում, բլոգում, սոցիալական մեդիայի գրառման կամ podcast-ի մեջ:



Էլեկտրոնային նամակ կամ տեքստային հաղորդագրություն ուղարկեք ձեր կոնտակտներին՝ հիշեցնելով լրացնել Մարդահամարի հարցաշարը:



Որևէ մեկին նամակ գրեք նշելով, որ մտածում եք նրանց մասին և հիշեցրեք հաշվված լինելու կարևորության մասին:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:
Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

**census.lacity.org**

**#2020Census**

# Ուղարկելու համար արագ և հեշտ հաղորդագրություններ

## Տեքստային հաղորդագրությունների օրինակներ

- Դուք կարևոր եք ինձ համար, և ես ցանկանում եմ համոզված լինել, որ դուք հաշվված կլինեք 2020 Մարդահամարում: Մասնակցեք առցանց՝ My2020Census.gov, հեռախոսով կամ փոստով:
- Դիմե՞լ եք գործազրկության նպաստ ստանալու համար: Գիտեի՞ք արդյոք, որ Մարդահամարի տվյալներն են որոշում դրա ֆինանսավորումը: Այցելեք My2020Census.gov կայք՝ Մարդահամարին մասնակցելու համար:
- Հուսով եմ դուք ապահով ու առողջ եք մնում տանը: Լրացրե՞լ եք արդյոք Մարդահամարի հարցաշարը: Դա այնքան արագ է և հեշտ, և հնարավոր է նույնիսկ առցանց՝ My2020Census.gov
- Ողջույն, ես բոլորից ճշտում եմ արդյոք մասնակցե՞լ են Մարդահամարին, թե ոչ: Իսկ դուք արդեն լրացրե՞լ եք ձեր հարցաշարը:
- Մենք չենք կարող վերահսկել ապագան, բայց կարող  ենք նախապես այն պլանավորել: Լրացրե՛ք Մարդահամարի հարցաշարը My2020Census.gov կայքում, եթե դեռ չեք արել դա:
- Ծնունդդ շնորհավոր...Ես չեմ հաշվում տարիները, բայց ուզում եմ, որ հաշվված լինես 2020 Մարդահամարում: Երազանք պահիր և լրացրու հարցաշարը My2020Census.gov կայքում:
- Դու գիտեի՞ր, որ ապրիլի 1-ը Մարդահամարի վերջին օրը չէր: Պատասխանիր մինչև հոկտեմբերի 31-ը, երբ Մարդահամար անցկացնողները կսկեն գնալ դռնեդուռ: Իմացեք ավելին՝ My2020Census.gov:
- Ինչպե՞ս են ընթանում առցանց դասերը: Հետաքրքիր է՝ լրացրե՞լ ես արդեն Մարդահամարի հարցաշարը: Այս տարի դա կարելի է անել առցանց՝ My2020Census.gov:
- Լսե՞լ ես Մարդահամարի մասին: Այս տարի մենք կարող ենք դա անել: Առողջապահական ծրագրերը, աղետների հետևանքների վերացումը, դպրոցական անվճար ճաշը և այլ ծրագրերը կախված են մեզնից: Իմացիր ավելին՝ My2020Census.gov:
- Ողջույն, գիտեմ որ նոր եք տեղափոխվել, ուստի կարող է ստացած չլինեք Մարդահամարի մասնակցության հրավերը փոստով, բայց  միևնույն է կարող եք լրացնել հարցաշարը My2020Census.gov կայքում նույնիսկ առանց կոդի:

---

## Ձեր կոնտակտներին ուղարկվող էլեկտրոնային նամակի տեքստ

Ողջույն,

Առողջապահության ներկայիս գլոբալ ճգնաժամը օգնում է գիտակցել, թե որքան կարևոր են կյանքի փոքր ուրախությունները, և որ միասին մենք կարող ենք բարիքներ գործող ուժ դառնալ: Թվում է, թե շատ բաներ անկառավարելի են մեր կողմից, սակայն մենք կարող ենք մեր խոսքն ասել մեր համայնքներին տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ հետագա 10 տարիների ընթացքում: Ես մասնակցելու եմ 2020 Մարդահամարին և ցանկանում եմ, որպեսզի միանաք ինձ:

Այս օրերին բազմաթիվ երևույթներ են գրավում մեր ուշադրությունը: Իսկ գիտեի՞ք արդյոք, որ COVID-19-ի հետ կապված բազմաթիվ, եթե ոչ բոլոր, խնդիրները կապված են Մարդահամարի հետ: Medicare, գործազրկության նպաստները, անվճար դպրոցական ճաշը և ավելին որոշվում է Մարդահամարի տվյալների հիման վրա: 2020-ին մենք հիմնվում ենք 2010 Մարդահամարի արդյունքների վրա: Ինչպիսին էլ լինեն «նոր նորմերը», անհնար է ժխտել, որ ոչ ամբողջական հաշվարկը չափազանց կքարդացնի մեր կյանքը հետագա 10 տարիների ընթացքում:

Հենց այս պատճառով անհրաժեշտ է շեշտել Մարդահամարի կարևորությունը բոլոր հնարավոր եղանակներով: Դուք կարող եք մտերմանալ ձեր համայնքի հետ՝ միաժամանակ ֆիզիկապես առանձնացած լինելով:

Ծանոթացեք հեռակա իրազեկման այս ուղեցույցին՝ ուղարկելու համար էլ. և տեքստային հաղորդագրություններ բերված օրինակներով:

Որպես գործընկեր և իմ ընկեր՝ դուք շատ կարևոր եք ինձ համար, և դուք, ձեր ընտանիքն ու ընկերներն արժանի եք հաշվված լինել: Անպայման լրացրեք Մարդահամարի հարցաշարն առցանց՝ My2020Census.gov հասցեով, հեռախոսով կամ փոստով և եկեք միասին հաղթահարենք ներկայիս դժվարությունները:

Լրացուցիչ ռեսուրսներ առկա են մեր կայքում:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:
Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

census.lacity.org
#2020Census